



ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բ Ա Յ Վ Ա Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

ԱՌԱՋԻԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

25-ՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

25-ՐԻ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴԻՐ

Կը հրատարակի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մեր ստանում ենք սեփական հեռագրերն եր:
«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և
մէկ և տաճար ամսականը՝ 9 ռ., ինչ և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
կանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՍԱՆԸ (Բաղարայան և Բաթումկայա փողոցների անկիւն),
կայսրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով,
բառին վճարվում է 2 կոպեկ:

Ե Գ Ր Ա Վ Ա Մ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն
Խորին ցաւով յայտնում է ազգականներին և ծանօթներին իր թանգազին եղբոր

Գ Ր Ի Գ Ո Ր Ի
մահը: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, դեկտեմբերի 8-ին, առաւօ-
տեան 10 ժամին սեփական տնից: Սաղաւայա փողոցի վրա, դէպի Մոզոն Ս.
Գէորգ եկեղեցին: 1—1

Կիրակի, ամսին 8-ին, Գամբեանց եկեղեցում հանգուցեալ
Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Խ Ա Չ Ա Տ Ր Ե Ա Ն Խ Ա Չ Ա Տ Ր Ե Ա Ն Ի

մահվան քառասներորդ օրը, պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կատարվի:
Այս մասին հանգուցեալի ծնողները՝ Խաչատուր Գրիգորեան և Նինա
Գէորգեան, ըրողն են: Անահիտ Խաչատուրեան և հօրեղբայրը՝ Յովհաննէս
Գրիգորեան Խաչատուրեան երբ յայտնում են ազգականներին և ծանօթնե-
րին: Ս. պատարագը կը սկսվի ժամը 10¹/₂-ին: 1—1

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՖՈՒԱԴՓԱՇԱՅԻ ԿՏԱԿԸ

(Շարունակութիւն)
Անգլիայի անտարբերութիւնը դէպի կենտրո-
նական Ասիայի դէպքերը զարմացնում և սար-
սափեցնում է ինձ: Աւելի շատ սարսափեցնում
է ինձ Ռուսաստանի վիճակը մէջ տեղի ունեցած
նշանաւոր փոփոխութիւնը, որ ձեռք է բերվել կով-
կասեան նահանգների խաղաղացմամբ: Ինձ համար
անկասկած է, որ մօտ ապագայում կուղղվեն
ռուսների ամենալուրջ գործողութիւնները մեր
Փոքր-Ասիայի դէմ: Չէր վեհախառութիւնը ան-
խառն կերպով պէտք է աշխատէր մեր ոյժերի
կազմակերպութեան համար: Ով գիտէ, արդեօք
մեր դաշնակցները միշտ հնարաւորութիւն կու-
նենան ժամանակին մեզ օգնութեան հասնել:
Մի ընտանեկան վեճ Եւրոպայում, և Բիսմարկի
նաման մի միմիայն Ռուսաստանում, կարող են
փոխել աշխարհի քարտէզը:
Ես տեսնում եմ բոլոր կառավարութիւնների
արած շատ յիմարութիւնները, — այդ միջոցն ան-
գամ նորանց կատարածի ամենաեղանակ մասն է
կազմում: Բայց, խոստովանում եմ, ես չեմ կա-
րող հասկանալ Եւրոպական կառավարութիւննե-
րի իմաստութեան խորութիւնը, երբ նրանք
այդպիսի տարօրինակ անտարբերութեամբ թող
են տալիս այդ...
Ռուսաստանի մասին ասածս ստիպում է ինձ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՆ

Պետական դատարանը. Թեմական դպրոցի
բացման պատրաստութիւնները. Հեռագրերն եր.
— Ներքին Տեսութիւն. Կառավարական հա-
ղորդարարութիւն. Դատաստանական դատարանի,
Մատենադարանի, Նամակ Բազմից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՆ. Վերջին տեղեկութիւններ. Կիսրոս
կղզի և հայերը. Նամակ Ամերիկայից. Պաշտա-
կան ինտրիգներ. Արտաքինը. Արտաքին լու-
րեր. — ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԱՐԱՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆուտբոլայա-
նի կտակը.

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՐՈՂԸ

Հասարակական կարծիքը Գերմանիայում
տառապի վերաբերած է այն խայտառակ մե-
կացուններին, որոնք երևան եկան դատա-
րանի առաջ ճառից գործի առիթով: Գեր-
մանական հասարակութիւնը սարսափով ի-
մացաւ, որ վերջին տարիներում տեղի ու-
նեցած մի քանի խոշոր պետական գործո-
ղութիւններ, պետական անձների փոփոխու-
թիւններ և մամուլի մէջ լցւա տեսած կա-
ռավարութեան վերաբերեալ բազմաթիւ նը-
կատողութիւններ ու յօդուածներ արդիւնը
են եղել խորամանկ և ստոր ինտրիգներ:
Ով կարող էր կարծել, թէ ներքին գործերի
միմիայն Կելլերի, զինուորական մինիստր
Բրոնզարի և, ինչպէս կարծում են, կանցլեր
Կապրիվի անկումը չարամիտ և յանդուգն
ինտրիգայի հետեւանք է: Այդ բոլորը պար-
զել է և շարունակում է պարզել դատա-
րանը, որ ընտել է ճառից գործը:
Ո՞վ է ճառը:
Դա դադանի ոստիկանութեան պետն է,
կայսրի ամենամեծերիմ անձը, որին յանձնե-
լիս է հսկել կառավարութեան գործողնե-
րի, պետական հանցարարութիւնների ըն-
թացքի վրա, և առաջին առնել ամեն մի
ինտրիգայի: Եւ յանկարծ դուրս է գալիս,
որ այդ նոյն ճառը ինքն է եղել ամենա-
մեծ ինտրիգանը և մութ ինտրիգաների
ղեկավարը. տարիների ընթացքում նա
սարքում էր յուզիչ լուրեր, դատարանը

որ մեր քրիստոնեաների մէջ դարձանայ փիլի-
սոփայական ոգին, որովհետեւ այդ ոգին կարող
է մերձեցնել մարդկանց, հանելով նրանց կղե-
րական ազդեցութիւնից: Սակայն, ես չտալում
եմ աւելացնել, որ մեզ համար, անկասկած, ա-
մենալաւ քաղաքականութիւն կը լինի զնն մեր
պետութիւնը ամեն դաւանաբանական հարցերից
բարձր:
Մեր ներքին գործերի մէջ մեր բոլոր ջան-
քերը պէտք է ուղղված լինեն դէպի միակ
նպատակ — ձուլել մեր ազգերը: Առանց այդ
ձուլման մեր կայսրութեան ապագայ գոյութիւ-
նը ինձ, յիշաւի, անհնարին է թուում:
Այսուհետեւ այս առաջին կայսրութիւնը չը
պէտք է պատկանի ոչ յայնքերին, ոչ սլաւներին,
ոչ որ և է ազգի, որ և է կրօնի: Արեւելեան
կայսրութիւնը կարող է գոյութիւն ունենալ
միայն Արեւելքի բոլոր ազգերի միացմամբ:
Միացեալ Գերմանիան, Ֆրանսիան իր քառա-
սուն միջոցն ազգաբնակչութեամբ, Անգլիան, որի
սահմանները ինքն ընտելումը այնպէս խիստ
կերպով գծադրել է, բոլոր մեծ ազդեցութիւնները
կարող են իւրաքանչիւրը դեռ մի առ ժամանակ
պահպանել իրանց հոր և օգտակար անհատա-
կանութիւնը: Բայց որ և է մի Չերնոգորիա, որ
և է մի սերբական իշխանութիւն կամ հայկա-
կան թագաւորութիւն, ոչ մի օգուտ չը բերելով
ոչ իրանց, ոչ աշխարհին, կարող են լինել աւել
կամ պակաս երազական թագաւորութիւն, ներկա-
յացնել մարդկութեան հին երկպառակութիւն-
ների թշուառ մնացորդներ, անխառնալի աւար
ամեն մի նոր աշխարհակալի համար, այսինքն
քաղաքական մարմիններ, որոնք չենաւար են

ազգի, որ մեռել է երկու հազար տարի ա-
ռաջ: Փորձ անելով վերականգնել Հոմերոսի և
Արիստոտելի հայրենիքը, նրանք կարողացան
ստեղծել միայն ինտրիգներ, անխառնութեան
և աւազակութեան օջախ:
Բ. Դուռը կարող է, ի հարկէ, գտնել մի
քանի ընդունակ ծառաներ յայնքերի միջից,
բայց հեղեմական ցեղի ոգին, ըստ իր էու-
թեան, միշտ թշնամական կը լինի դէպի մեզ:
Վաղեմի փառաւոր պատմութեան իշխողութիւն-
ները, որքան էլ նրանք բաժանված լինեն
մեր այժմեան յայնքից ապականութեան, տը-
գիտութեան և վայրենութեան դարերով, դեռ
երկար ժամանակ պէտք է այդ ինքնատեղ ազգի
մէջ յայտ ներշնչեն նորից յաղթականութեւն արեւե-
լեան կայսրութիւնը, որին այնքան խայտառա-
կել են բեւաբանական յայնքերը: Այդ կեղծ և
չար ազգի դատարարութիւններից մեզ ամենից
լաւ պահպանում են նրա անախառ ամբարտաւա-
նութիւնը և վրդուկեցուցիչ աններողամտութիւ-
նը, որոնք նրան օրից օր աւելի զղուելի և ան-
տանելի են դարձնում Արեւելքի մեր բոլոր ժո-
ղովուրդների մէջ:

Մեր քաղաքականութիւնը պէտք է աշխատի
մեկուսացնել յայնքերին, որքան հնարաւոր է,
մեր միւս քրիստոնեաներից: Մասնաւոր պէտք
է ազատել բոլորներին յայն եկեղեցու տիրա-
պետութիւնից, չը կապելով նրանց ոչ ուս, ոչ
կաթօլիկ հոգեբանականութեան հետ:

Բ. Դուռը երբեք չը պէտք է թող տայ այն-
պիսի ինտրիգներ, որոնց նպատակն է միութիւն
հաստատել հայերի և ուղղափառ (յունադաւան)
եկեղեցու մէջ: Գուցէ խեղացի լինէր նպատակը

որ մեր քրիստոնեաների մէջ դարձանայ փիլի-
սոփայական ոգին, որովհետեւ այդ ոգին կարող
է մերձեցնել մարդկանց, հանելով նրանց կղե-
րական ազդեցութիւնից: Սակայն, ես չտալում
եմ աւելացնել, որ մեզ համար, անկասկած, ա-
մենալաւ քաղաքականութիւն կը լինի զնն մեր
պետութիւնը ամեն դաւանաբանական հարցերից
բարձր:
Մեր ներքին գործերի մէջ մեր բոլոր ջան-
քերը պէտք է ուղղված լինեն դէպի միակ
նպատակ — ձուլել մեր ազգերը: Առանց այդ
ձուլման մեր կայսրութեան ապագայ գոյութիւ-
նը ինձ, յիշաւի, անհնարին է թուում:
Այսուհետեւ այս առաջին կայսրութիւնը չը
պէտք է պատկանի ոչ յայնքերին, ոչ սլաւներին,
ոչ որ և է ազգի, որ և է կրօնի: Արեւելեան
կայսրութիւնը կարող է գոյութիւն ունենալ
միայն Արեւելքի բոլոր ազգերի միացմամբ:
Միացեալ Գերմանիան, Ֆրանսիան իր քառա-
սուն միջոցն ազգաբնակչութեամբ, Անգլիան, որի
սահմանները ինքն ընտելումը այնպէս խիստ
կերպով գծադրել է, բոլոր մեծ ազդեցութիւնները
կարող են իւրաքանչիւրը դեռ մի առ ժամանակ
պահպանել իրանց հոր և օգտակար անհատա-
կանութիւնը: Բայց որ և է մի Չերնոգորիա, որ
և է մի սերբական իշխանութիւն կամ հայկա-
կան թագաւորութիւն, ոչ մի օգուտ չը բերելով
ոչ իրանց, ոչ աշխարհին, կարող են լինել աւել
կամ պակաս երազական թագաւորութիւն, ներկա-
յացնել մարդկութեան հին երկպառակութիւն-
ների թշուառ մնացորդներ, անխառնալի աւար
ամեն մի նոր աշխարհակալի համար, այսինքն
քաղաքական մարմիններ, որոնք չենաւար են

ազգի, որ մեռել է երկու հազար տարի ա-
ռաջ: Փորձ անելով վերականգնել Հոմերոսի և
Արիստոտելի հայրենիքը, նրանք կարողացան
ստեղծել միայն ինտրիգներ, անխառնութեան
և աւազակութեան օջախ:
Բ. Դուռը կարող է, ի հարկէ, գտնել մի
քանի ընդունակ ծառաներ յայնքերի միջից,
բայց հեղեմական ցեղի ոգին, ըստ իր էու-
թեան, միշտ թշնամական կը լինի դէպի մեզ:
Վաղեմի փառաւոր պատմութեան իշխողութիւն-
ները, որքան էլ նրանք բաժանված լինեն
մեր այժմեան յայնքից ապականութեան, տը-
գիտութեան և վայրենութեան դարերով, դեռ
երկար ժամանակ պէտք է այդ ինքնատեղ ազգի
մէջ յայտ ներշնչեն նորից յաղթականութեւն արեւե-
լեան կայսրութիւնը, որին այնքան խայտառա-
կել են բեւաբանական յայնքերը: Այդ կեղծ և
չար ազգի դատարարութիւններից մեզ ամենից
լաւ պահպանում են նրա անախառ ամբարտաւա-
նութիւնը և վրդուկեցուցիչ աններողամտութիւ-
նը, որոնք նրան օրից օր աւելի զղուելի և ան-
տանելի են դարձնում Արեւելքի մեր բոլոր ժո-
ղովուրդների մէջ:

Մեր քաղաքականութիւնը պէտք է աշխատի
մեկուսացնել յայնքերին, որքան հնարաւոր է,
մեր միւս քրիստոնեաներից: Մասնաւոր պէտք
է ազատել բոլորներին յայն եկեղեցու տիրա-
պետութիւնից, չը կապելով նրանց ոչ ուս, ոչ
կաթօլիկ հոգեբանականութեան հետ:

Բ. Դուռը երբեք չը պէտք է թող տայ այն-
պիսի ինտրիգներ, որոնց նպատակն է միութիւն
հաստատել հայերի և ուղղափառ (յունադաւան)
եկեղեցու մէջ: Գուցէ խեղացի լինէր նպատակը

նի ֆոնդերը, որոնք նպատակ ունի միայն զանազան տեսակ արկածախնդիրների աջակցությունը:

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուրախալի է շատ, որ խորհրդի եպիսկոպոս Ստեփանէ՝ Բագուի Հասարակութիւնի նից ընտրված յանձնաժողովի Հետ միասին ձգտում է ամենից առաջ դրամական կողմից ապահովել Բագուի թեմական զբոսայգի և ապա միայն ձեռնարկել նրա բացման: Ինչպէս երևում է մեր ստացած հեռագրից, թեմական դպրոցի օգտին բացած Հանգանակութիւնը արդէն տուել է 200 հազար ռուբլի, և յոյս ունենք, որ նախորդած դրամաշուկայ, այն է 300 հազար ռուբլին կը լրանայ, և այդպիսով բացվելի դպրոցի նիւթական կողմը միանգամայն կապահովվի: Առնետալով 300 հազար ռուբլի դրամաշուկան, դպրոցը տարեկան եկամուտ կունենայ, 6 տոկոս հաշուելով, 18 հազար ռուբլի: Եթէ դրա վրա աւելացնենք Մարդասիրական ընկերութեան կողմից տարեկան գէթ 2,000 ռուբլի, որ այդ ընկերութիւնը տալիս էր այժմ փակված ծխական դպրոցին, այն ժամանակ կարող ենք ասել, որ թեմական դպրոցի տարեկան 20 հազար ռուբլի եկամուտը հաստատ կը լինի և ուրեմն դպրոցը կարող է կանոնաւոր կերպով պահպանել իր գոյութիւնը: Բացի Ներսիսեան դպրոցից, որ տարեկան ծախսում է մօտ 50 հազար ռուբլի, մեր միւս թեմական դպրոցները շատ աննշան եկամուտ ունեն: Ընդուն թեմական դպրոցը հազիւ 16 հազար, իսկ երեւանի թեմական դպրոցը մօտ 14 հազար, և այն էլ անհաստատ, երբեք, երբեք կարող է պահպանել: Այդ համեմատութեամբ, Բագուի թեմական դպրոցը, ունենալով տարեկան հաստատ եկամուտ 20 հազար ռուբլի, կարող է փոփոխ կերպով բանալ իր դռները, համարված լինելով, որ իր գոյութիւնը պահպանելու համար կարիք չի լինի այլ ևս մուրազ կանոնութիւն անելու: Մնում է այժմ փնտռել երկրորդ հարցը, այն է, թէ ո՞րտեղ պէտք է բանալ դպրոցը: Բագու, թէ Եւֆրատի, մի հարց, որը հրապարակ եկաւ «Մշակ» էջերում, և ապա անցաւ ամբողջ հայոց մամուլին: Դպրոցի տեղի մասին «Մշակ» իր կարծիքը յայտնեց հէնց այն օրը, երբ արդիւնք վաթողիկոսական կոնգրէսը («Մշակ» № 128), առաւելութիւն տալով Բագուին: Մենք շատ ուրախ կը լինենք, եթէ խորհրդի եպիսկոպոս Ստեփանէ այդ հարցում ականջ դնելու երկու կողմի կարծիքներին, ուշադրութեամբ վերաբերվելու այդ կարծիքներին և

պրօգրէսի համար, փոփոխութիւն տալու խաղաղութեան համար:

Նորադրոյ թագաւորութիւններ կազմակերպելու համար յուսալի է միայն ազգերի մեծ համախմբութիւններ թէօրեման: Էստոնացի, մեր պետութեան կործանման առաջն առնելու միջոցն այն է, որ վերակազմվեն նրան նոր լայն և ամուր հիմքի վրա, որ ընդգրկի իր բոլոր բաղադրիչ տարրերը, առանց խաբուրտեան ցեղի և կրօնի: Հաւասարութեան այդ սկզբունքը, բնականաբար, պէտք է այն հետեանքը ունենայ, որ մեր քրիստոնեայ հայապատկանը զբաղանք զանազան պաշտօններ պետական վարչութեան մէջ: Այդպիսի ահա սկզբում են մեզ համար բաւական լուրջ դժուարութիւններ: Մեր քրիստոնեաները, ազատվելով այն լծից, որ նրանց հնազանդութեան մէջ էր պահում, չափից դուրս շտապում են իրանց նախկին տեղերի տեղը բռնել: Մասնաւոր հայերը այդ կողմից չափազանց ձգտում են ցոյց տալու: Արդար կը լինէր չափաւորել նրանց եռանդը, բանալով պետական ծառայութեան ասպարէզը միայն նրանց առաջ, որոնք անկեղծ կերպով կընդունեն մեր կայսրութեան միացնող սկզբունքները: Առհասարակ բոլոր մեր քրիստոնեայ ազգերը երկու զանազան կրօն ունեն, մէկը բարոյական, միւսը—բարձրական: Ինչ վերաբերում է բարոյական կրօնին, մեր կառավարութիւնը պէտք է բացարձակապէս անտես անէ նրան, իսկ դրա փոխարէն նա պէտք է մեծ ուշադրութեամբ վերաբերվի այն ամենին, ինչ վերաբերում է բարձրական համոզումներին, որովհետեւ այդ համոզումները շատ անգամ պա-

րջութեամբ ընկնելով խնդիրը՝ յայտնելու իր վերջնական եզրակացութիւնը թէ կաթողիկոսին և թէ հասարակութեան: Մենք յոյս ունենք, որ սրբազան Ստեփանէ, իբրեւ ինտելիգէնտ անձնաւորութիւն, այդ խնդրին չի վերաբերվի մի օր և է տգէտ վեղարաւորին յատուկ արեւելեան կամայականութեամբ, այլ կաշխատի ականջ դնել լսվող կարծիքներին և այդպիսով յարգանք ցոյց տալ զեպի հասարակաց կարծիքը:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ի Ն Ե Ի
(Ուստաց դրամաշուկութեան)

Կ. Պ. Օ. Լ. Ի. Կ. Գեկտեմբերի: Մինիստրներին խորհրդի վերջին նիստում ընկնում էր հայերին ներումն չտրուելու նախադիմումը: Հայոց պատրիարքը ներկայացրեց Բ. Գրանը դրաւոր վկայութիւն, որ եթէ ներումն չտրվի, ներման արժանացած անձինք հանդիստ կը պահեն իրանց: Պատրիարքը մի տեսակ բարոյական երաշխաւթիւն է յանձն առնում նրանց ապագայ ընթացքի համար: Պատրիարքը հարցրեց, որ ներումն ստացած անձինք սովորաբար հասարակութեան երգում կը տան եկեղեցիներում:

Կ. Պ. Օ. Լ. Ի. Կ. Գեկտեմբերի: Մինիստրներին խորհուրդը որոշեց ներթափել սովորաբար հայեցողութեանը հայերին ներումն չտրուելու առաջարկութիւնը: Թէպէտ ներումն կանոնաւոր ընդհանուր, բայց մտադրութեան կալ բացառութիւններ անել, այն է՝ ներումն չը չտրուի այն անձանց, որոնք դատաւարութեամբ են բանտարկութեան աւելի քան երեք տարով, նոյնպէս և հայոց չարժան քանտարկված, բայց դեռ ևս չը դատաւարութեամբ պարագլուխներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
(Հեռագրի Ուստաց դրամաշուկութեան)

Պետեբերգ, 5 դեկտեմբերի: Հրատարակված է կառավարչական հարցադրութիւն, որը, փոփոխելով հիման վրա, պարզաբանում է համառոտանողական կազմակերպութիւնների և դաշնակցութիւնների իսկական նպատակութիւնը և որը բացատրում է անցեալ նոյեմբերի երկրորդ կեսում Մոսկվայում տեղի ունեցած ուսանողական խառնակութիւնների ընթացքը և աստուղ, և վարչութեան ձեռք առած միջոցները: Կաշխատվում 711 հոգու ընդհանուր թիւից, մի քանիսն են վարչութեան և ուսումնարանական իշխանութեան առանձին ուշադրութիւնը դրաւելին, որպէս խառնակութիւնների կազմակերպողներ և դեկավարողներ, որի պատճառով էլ նրանց, նոյնպէս և նոյեմբերի 17-ին կայանաւորված «դաշնակցական խորհրդի» անդամներին

բունակում են իրանց մէջ մեր գոյութեան հետ չը հաշտվող թէօրեմաներ:

Եթէ մի օր և է փայա աղօթում է Աստուծուն մոխէսական օրէնքով կամ քրիստոնէական կանոններով, այդ չէ կարող առիթ լինել, որ մենք զրկվենք մեզ այն օրէնքից, որ կարող է տալ նրա ծառայութիւնը: Բայց եթէ մի և նոյն փայան, չընդունելով մեր հայրենիքի միութիւնը, երաշում է բեւոյանական կայսրութեան մասին կամ ձգտում է ծառայել Վիլիսեան թագաւորութեան, նա դադարում է օրինական ծառայ լինելուց և պէտք է հեռացնել:

Պետութեան և հայրենիքի միութիւնը, հիմնված բոլորի հաստատութեան վրա—ահա այն միակ դժգոհար, որի դաւանութիւնը ես կը պահանջեի մեր բոլոր պաշտօնեաներից:

Այդ պողաբեր դժգոհարի հրապարդութիւնը երեցնելու համար, ձեր վեհախառնութիւնը պէտք է ամենից առաջ հող տանէք արդարադատութեան կազմակերպութեան մասին: Այդ գործը դժուար է, բայց անյետաձգելի և անհրաժեշտ: Քաղաքացիների կեանքը և գոյքը պաշտպանող օրինական երաշխաւորութիւնների հաստատութիւնից յետոյ, ձեր կառավարութեան առաջին գործը պէտք է լինի, անպայման, ճանապարհների շինելը: Այն օրը, երբ մենք այնքան երկաթուղիներ կունենանք, ինչքան ունեն եւրոպական երկրները, ձեր վեհախառնութիւնը կը դառնայ աշխարհիս առաջին կայսրութեան գլուխը: Կայ, սակայն, մի ուրիշ հարց, որի կարեւորութիւնը մեզ համար անբացատրելի է խօսքերով, դա— ժողովրդական կրթութիւնը

գործը կը ընկնի պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պաշտպանելու միջոցների բարձրագոյն հաստատված կանոնադրութեան 32—36 յօդուածների հիման վրա: Իսկ մնացած 662 ուսանողների յանցաւորութիւնը քննեց համալսարանական դատարանը, որը երեք կարգի բաժանելով նրանց, վճռեց. 1) առաջին կարգի ուսանողներին, թուով 26 հոգի, որոնք մասնակցել են վերոյիշեալ համադրութեաններին՝ յանցանքը ծանրացնող հանգամանքներում, կամ որոնք առաջ էլ նկատված են եղել համալսարանում զանազան յանցանքների և կանոններ խախտելու մէջ, արձակել համալսարանից, իրաւունք տալով նրանց մտնել ուրիշ համալսարանները եկող ուսումնական տարվայ սկզբից: 2) երկրորդ կարգի ուսանողներին, թուով 175 հոգի, որոնք մասնակցել են ժողովներին երկու անգամ, ենթարկել նոյն պատժին, և 3) երրորդ կարգի ուսանողներին, թուով 461, որոնք մասնակցել են ժողովներին մէկ անգամ, արձակել համալսարանից՝ եկող ուսումնական տարվայ սկզբից կրկին նոյն համալսարանը ընդունվելու իրաւունքով: Սակայն ուշադրութեամբ առնելով, որ ուսանողները մասնակցում էին ժողովներին, որպէս վկայում են գործի հանգամանքները, այնպիսի անձանց ճշման առկա, որոնք դիմում են համալսարանական կեանքի կանոնները ընթացքին հակադրելու նպատակներին, վարչութիւնը որոշեց երկրորդ և երրորդ կարգի ուսանողների համար, թուով 636 հոգի, միջնորդել ժողովրդական լուսաւորութեան միջնորդի առաջ, վերոյիշեալ պատժները մեղմացնելու մասին, այն է՝ ենթարկել այդ ուսանողներին կարգապահական (дисциплинарный) պատժներին, համապատասխան նրանց յանցանքի աստիճանի, վարչութեան որոշմամբ, ուսանողներին համար այժմ գործադրվող կանոնների հիման վրա, այդ կանոնների 37 յօդուածում մատնացոյց արած հետեանքներով, և նախադրուցներով, որ վերոյիշեալ ուսանողները, եթէ կրկին կը մասնակցեն ժողովներին և արգելված համադրութեաններին, կարտաքուլեն համալսարանից՝ առանց մեղմացնելու նրանց վիճակը: Մոսկվայի կայսերական համալսարանի վարչութեան միջնորդութեանը այն անձանց մասին, որոնք մտած են երկրորդ և երրորդ կարգեւորում, յարգեց ժողովրդական լուսաւորութեան միջնորդը, և նրանք նոյեմբերի 25-ի, 26-ի և 27-ի ընթացքում արձակված են կալանաւորութիւնից, թուով 636 հոգի:

ԴԱՏԱՍԱՆԱԿԱՆ ԴԱՂԻՃ

Գեկտեմբերի 3-ին դատաստանական պալատում ընկնեց «Արձագանքի» խմբագիր Արզաթ Յովհաննիսեանի դանդաղ, «Տարազի» խմբագիր

է, ամեն մի առաջադիմութեան միակ հիմքը, բարոյական և նիւթական մեծութեան մշտական աղբիւրը: Նաւասորքը, գործը, վարչութիւնը— ամեն բան կապված է նրա հետ: Առանց այդ ամենաաղբիւրի հիմքի, մենք չենք կարող ունենալ ոչ ոյթ, ոչ անկախութիւն, ոչ ապագայ: Չը նայելով մեր կրօնի ոգուն, որ այնքան բարձր կրթական է, ժողովրդական լուսաւորութիւնը մեղմում չառ յետամնաց վիճակի մէջ է, և դա ունի բազմաթիւ պատճառներ: Մեր անհամար մեղքերսները և այն ահագին միջոցները, որ նրանք անօգուտ կերպով կանում են, ապրիս են մեզ ընտրովին պատրաստ նիւթ կազմակերպելու ազգային կրթութեան ամենաընդարձակ սխտեւ: Եթէ ես չը կարողացայ իրազորել այդ գեղեցիկ միտքը, դրա պատճառը այն է, որ ես միշտ ենթակայ էի ամենաթափաղ հանգամանքներին: Ես կտալու եմ այդ զորացիր իմ յաջորդներին: Նրանք չեն կարող դրանից աւելի արդիւնաւոր և փառաւոր գործ մտածել *):

Ես գիտեմ, որ մեր մուսուլմանների մեծամասնութիւնը կանխի ինձ իբրեւ գեաւուրի և իբրեւ մեր կրօնի թշնամու: Ես ներում եմ նրանց, որոնք կատարում են ինձ դէմ, որովհետեւ նրանք չեն կարող հասկանալ ոչ իմ զգացումները, ոչ իմ ասածները: Նրանք կիմանան մի օր, որ ես՝ գեաւուրս, որ ես՝ անօրէն նորասերս, աւելի կօծնասէր էի, աւելի լաւ մուսուլման էի, քան այն սղեւ նախանձախնդիրները,

*) Յուսուլ փայտ կամուրում էր հանել մեղքեաները մուսուլման հորեւորականութեան ձեռքից և դարձնել նրանց հանրամատչելի աշխարհական դպրոցներ:

Տիգրան Նազարեանի դէմ, որով առաջինը մեղադրում է երկրորդին զրպարտութեան մէջ: Գործի էութիւնը, համառօտակի, հետեւայն է: «Արձագանքի» խմբագիր Արզաթ Յովհաննիսեան, իր թերթի մէջ անուանեց Տիգրան Նազարեանին զրական աֆ երիտա: Նազարեան պատասխանելով «Արձագանքի» խմբագրին, «Տարազի» 1890 թւի № 6-ի մէջ, հարցերի ձեռով բարդեց Արզաթ Յովհաննիսեանի վրա 19-մեղադրանքներ: Ահա այդ 19 կէտերը:

1) Արզեօք մեր բաժանորդներին խաբել ենք, բաժանորդները ժողովել ու երկու և կէս ամսով չը հրատարակել համարները: 2) Արզեօք ընթերցողներին խաբել ենք և տպարանատէր պ. Մարտիրոսեանին թերթի տպագրութեան ուշադրութիւնը պատճառ ընկնել: 3) Թերթի համար թուով Ենք առեւ և վճարը տարիներով ուշացրել և մինչև օրս էլ չը վճարել ու պահանջած ժամանակն էլ ազնիւ խօսք ենք տուել այս ժամանակ, այն ժամանակ վճարել, և վերջը, ի հարկէ, խաբել չը վճարել: 4) Տպարանում տարիների ընթացքում թերթը տպագրել ենք և վճարը չը տուել ու վերջը թերթը գրաւ դրել տպարանատէր մօտ: 5) Խոստացել ենք մեր ընթերցողներին, որ խօսքի հետ զուգընթաց և պատկերը պիտի տանք ու խաբել ենք մեր ընթերցողներին հին կիշէներով զարդարելով մեր թերթը: 6) Բանկում վաճառականներին՝ մուրհակ ներկայացնելով՝ առաջարկել ենք մեր թերթին բաժանորդ գրվել: 7) Փաղաքներ ենք թափառել և դռնէ դուռ մուրացիաների պէս բաժանորդներ հաւաքել մեր թերթին: 8) Բանկերում տասնեակ հազար պարտքերի վճարման փոխարէն առաջարկել ենք արդեօք մեր յաջարարութիւններին վճարով ապահովացնել: 9) Թիքի մնացած հարկեր հաղարներ ենք վաճառել: 10) Բանկում դիւրեկտոր ենք ընտրվել և մեր հսկողութեան յանձնված գումարները վեր առել հարկու հաղարով և վերջը հրապարակի վրա դրել խնդիր, որ մեր պարտքը ընծայվի մեզ: 11) Բանկում դիւրեկտոր ենք ընտրվել և անպատեհին փող տալիս, պահանջել 1000 ռուբլի: 12) Հոգաբարձու ենք ընտրվել և ուսուցիչներին խրոխտացել, եթէ մեր թերթում չը գրեն, մեր ասածը չանեն, պիտի վճարվեն: 13) Հասարակական փողեր՝ Ս. Էլմիսնայ, Արթուրու եպիսկոպոսի երկրաբարձական ուսումնարանի, Լուսադանանակի համար փողեր մեր ձեռին է եղել և հաշիւ չենք տուել ազգին, թէ ուր են այդ փողերը: 14) Բանկից ամիսներով ուժեղ ենք ստացել և խռովել, որ մեզ տասնեակ հազարներ չեն ընծայել ու չենք դնացել ծառայութեան: 15) Բաժնիքի պէս վեհախառն խաբել ենք, մեզ աշխատացրել և յետոյ նրա վարձարութեանը միւսն չեւ այսօր էլ նրա օրերին չը հասցրել: 16) Մեր մասնաւոր կեանքում, գիշերները թղթախաղու-

որոնք ինձ վրա անէժը էին թափում: Նրանք կը հասկանան, բայց, դժբաղդաբար շատ ուշ, որ ես աւելի եմ չարչարվել, քան մի նաճատակ, այն կրօնի և կայսրութեան փրկութեան համար, որ իրանք հասցրել էին անխուսափելի կորստի: Ամեն մի հաստատութեան, իրի նա աստուածային թէ մարդկային, առաջին օրէնքն է, իր սեփական պահպանութեան օրէնքը: Իսկ ես ինչ բանի էի ձգտում մեր բոլոր ընթերցողներին, եթէ ոչ խաղաղ պահպանութեան: Միայն դրա համար միջոցը ես որոնել եմ ու թէ մեր հին նախապաշարմունքների կրօն հնազանդութեան ցոյց տալու մէջ, այլ բոլոր ոյթերը լարում էի զանելու: Այդ միջոցը այն սուրբ ճանապարհների մէջ, որը ինքն իսկ Աստուածը գծադրել է մեր առաջ, ինչպէս և աշխարհի բոլոր ազգերի առաջ: Իմ թղթ և դպրոցում ձեռքը հրաժարվում է չարութեանը: Աւարտելով այս տողերը ես խնդրում եմ ձեր վեհախառնութեանը բարեհաճել ու յաղորդութեամբ ընդունել դժբաղդ ծառայիս այս վերջին հառաչանքները, այն ծառայի, որը իր բոլոր մարդկային թուութիւններով հանդերձ, միշտ կարողացել է սիրել մարդկանց, չարութեան աշխատել է, որ բարեք գործի, ինչքան կարող է գործել և որը այժմ փրկված իր պարտաւորութիւնների ծանրութեան տակ, թողնում է աշխարհը առանց ափսոսանքի և մեռնում է իբրեւ խնամք մուսուլման, յանձնելով իր հոգին գերագոյն, բարի և օղորմած Դատաւորի կամքին:

Յուսուլ-փայտ

թեամբ, արեւելոյթեամբ, գեղի կեանք վարելով ենք անցկացրել: 17) Մեր ընկերական շրջանում մեր խօսակցութիւնը, ընկերական զրոյցները փառացային, կեղտոտ սրախօսութիւններով ենք համեմել: 18) Ինչ գործ էլ որ լինի, հասարակական թէ մասնաւոր, ասանձաճներս փշրել, խորտակել, մեռցրել ենք: 19) Բազմից ուսանողներին հասցնելու համար փող ենք ստացել և կէսը մեր գրպանումը դրել ու կէսը հասցրել ըստ պատկանելոյ:

Ահա այդ կէտերի դէմ Արգար Յովհաննիսեան դանդաղ ներկայացրեց դատաստանական քննիչին, յայտնելով, որ դա արատաւորում է էր հասարակական գործունէութիւնը, պատիւը և բարի անունը: Կողմերի մէջ հայտնութիւն չը կայանալու պատճառով, քննիչը գործը յանձնեց նահանգական դատարանին: Գործի քննութեան օրը Արգար Յովհաննիսեան ներկայացրեց մի քանի թղթեր, որոնցով օգուտ էր ցոյց տալ, որ 1) ինքը փող չէ պարտ հանդուցեալ Բաֆֆին, 2) որ էջմիածնի օգտին հաւաքած փողերը Երբ փած են Մակար կաթողիկոսի դատաւանկիւր Սահակ վարդապետին, որից և կայ ստացական, 3) որ ուսանողներին համար հաւաքած փողերը նա ուղարկել է ըստ պատկանելոյ և որ ընդհանրապէս «Տարազի» գրասենքը իր անձի մասին ճիշդ չեն: Դատարան կանչված վկաներից իշխան Ամատունի (Քաղաքային Կրօնական ընկերութեան նախկին կառավարիչը, որ դատաւարված է գեղծումների համար), ցոյց տուց, որ Արգար Յովհաննիսեանի պարտքը մտադրութիւն կար աղանդել այն ուսանողին, որ Յովհաննիսեանն ստանում էր բանկից, այլ և նրա հրաւարակած լրագրի մէջ տպագրելի յայտարարութիւններով: Վկայ Ալեքսանդր Մելիք-Ալաբաբեան յայտնեց, որ օրքան իրան յայտնի է, որ Արգար Յովհաննիսեան փող էր պարտ Բաֆֆին, բայց թէ ինչքան, իրան յայտնի չէ: Տիկին Բաֆֆի ցոյց տուց, որ իրան ոչինչ յայտնի չէ իր ամուսնու և Յովհաննիսեանի դատական հայրենիքի մասին: Դատարանում կարգաւորեց գրաւոր ցուցմանը այն մասին, որ ասանող Տէր-Ասատրեան յայտնել է, թէ ուսանողների օգտին Արգար Յովհաննիսեանին հաւաքած 200 ռուբլւց, ինքը ստացել է միայն 100 ռուբլւ:

Նահանգական դատարանը 1893 թվի մարտի 15-ի նիստում, մեղաւոր ճանաչելով Տիգրան Նաղաբեանին գրաւորութեան մէջ՝ դատաւարտեց նրան 3 ամսվայ բանտարկութեան, և որոշեց, վճիռը, օրինական այժ ստանալուց յետոյ, տպագրել մայրաքաղաքի լրագրիներում մեղադրողի հաշուով:

Դժգոհ մնալով այդ վճիռից, մեղադրվողը գործը անցկացրեց դատաստանական պալատը, ուր և քննիչը ղեկավարեց 3-ին Մասնաւոր մեղադրողի պալատանը համարելով «Տարազի» մէջ տպագրածը անհիմն, խնդրեց մեղաւոր ճանաչել Նաղաբեանին: Իսկ մեղադրվողի պալատանը, իր կողմից ապացուցանում էր, որ 19 կետերից չափերը հիմնաւոր են, և մնացած կէտերի վերաբերմամբ փաստաբանն այն կարծիքը յայտնեց, որ վերաւորանքը փոխադարձ է, որովհետեւ Արգար Յովհաննիսեանին էլ Տիգրան Նաղաբեանին անուանել է աֆէրիստ:

Դատաստանական պալատը ղեկավարեց 4-ին, ժամը 5-ին, յայտարարեց իր վճիռը, որով Տիգրան Նաղաբեանին, վեց կէտերի համար, դատաւարտվեց մի ամիս և 10 օրվայ բանտարկութեան:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Գնանք նրա յետևից».— Զենքիկոս Սենկելիչ, թարգմանեց Տիգրան Վարդանանց, Ախալցխա, 1896 թ. գին է 20 Կ:

Ժամանակակից եւրոպական նշանաւոր գրողներից ոչ ոք այնքան խոր կերպով չէ ուսումնասիրել հին, հեթանոսական աշխարհը, նրա անկումը և նոր, քրիստոնէական աշխարհի ծագումը ու գեղարուեստական նկարագրութեան նիւթ դարձրել նրանց, ինչպէս լեհացի վիպագրող Զենքիկոս Սենկելիչ: Նա ամենավաղ գոյներով պատկերացնում է ձեր առաջ մի հզօր, խորհաւ, փարթաւ, ճօխ, էպիկուրեան դուարձութիւններին անձնատուր եղած աշխարհ—հոգմէական հեթանոսական աշխարհը, որ ձգտում է կլանել ամեն բան, տիրապետել ամբողջ երկրագնդին, որ, ըստ երեւոյթի, անյաղթելի և անստանալի է և իր փառքի գաղափրական հա-

տած է թիւում. բայց երբ, իբրեւ հակադատներ, նա նկարագրում է նրա կողքին մի սլարդ, անպաճախ, նոր սկսվող կեանք, մի աշխարհ, որ արհամարհում է այդ բոլոր փառքը և մեծութիւնը և իր զօրութիւնը որոնում է միայն բարոյական վեհ գաղափարների, իդէալական ձգտումների, անհուն անձնութեան և լայն մարդասիրութեան մէջ, դուր իսկոյն տեսնում էք, թէ որքան փառք, նեխած է հին, նիւթական աշխարհը և որքան մօտալուծ է նրա կործանումը, դուր իսկոյն հասկանում էք, որ այդ սլարդ, խղճով կեանքով ասլուղ համայնքը մի օր պէտք է նուաճի ամբողջ երկրագնդը: Ոչ մի գրիչ այնքան ճարտար և գեղարուեստական կերպով չէ նկարագրել չունչ փշոլ հեթանոսութեան օրհասական կոլիդ նորածին քրիստոնէութեան հետ, ինչպէս Սենկելիչի գրիչը, որը, այդ կողմից, իր կատարելութեան գագաթնակէտին հասաւ «Quo vadis» նորագոյն վէպի մէջ:

«Գնանք նրա յետևից» փոքրիկ վէպը ևս ներկայացնում է այդ օրհասական կոլի մի էջը: Հոգմայեցի պատրիկ կիննա, որ ամեն բան ճաշակել, ամեն դուարձութեան համը առել և ամեն մի ցանկութեան ու բնահոգեւորին յատկապէս զգուշ էր վերջոյ դրում է իր հոգու և կենքի դատարկութիւնը, ոչ մի նպատակ չէ տեսնում այդ յիփոցած, չուսյալ կեանքի մէջ և բնադրամբ սկսում է որոնել այն լոյսը, որ այդ ժամանակ սկսել էր ծագել աշխարհի վրա: Հոգու և կենքի նոյն դատարկութիւնը զգում է և նրա չքնաղ կինը, իր գեղեցկութեան համար գրեթէ աստուածացրած հէլլենուհի Անթիպա փառքը, հարստութիւնը, աշխարհի բոլոր բարիքները, որ նրա ամուսնից դուրս է նրա տրամադրութեան տակ, չեն կարողանում դուարձացնել նրան. գիշեր, ցերեկ, ամեն օր, ամեն բողէ նրան հալածում է մի սարսափելի ուրախական, մի դարձուրդի տեսիլ և այդ երկար ու ձիգ տարիներ, մինչև որ ամուսնիցը դնալով յետադարձ և տեսնելով Յիսուսին խաչված աւաղանների հետ, հասկանում են, որ նա է իրանց օրինած լոյսը և այդ օրից սարսափելի ուրախանալով բոլորովին չքանում է: Այսպիսի մի գեղարուեստական աշխատութիւն, տարակոյս չը կայ, ընթերցանութեան համար ամենալաւ գիրքն է, որ կարող է ինքն յանձնարարել ընթերցող հասարակութեան. ափսոս միայն, որ թարգմանութիւնը այնքան էլ աչող չէ:

Հ. Ա.

ՆԱՄԱԿԱ ԲԱԳՈՒԻՑ

Գեկտեմբերի 2-ին Բագուի նոր բացվելի թեմական դպրոցի համար հանդանակութիւն անելու նպատակով, արդէն ընտրված է մի մասնաժողով, բաղկացած հետևեալ անձնանքերից. Խ. Ս. Անտոնեան, Գ. Ս. Ալախանյան, Ա. Ի. Աղաբեան, Խ. Գ. Թումանյան, Բ. Մ. Դոյուխանյան, Կ. Ի. Միրզաբեգեան, Պ. Օ. Դուրախանյան և Ա. Բ. Արթիքեան: Վերջինեալ ութը անձինք, իրանց գլուխ ունենալով խորհիւ եպիսկոպոս Ստեփանէին, երկու օր է, որ սկսել են զիմել այստեղի հարուստներին և արդէն մինչև այսօր, ութ հոգի ստորագրվել են 105 հազար ռուբլի: Նոյնատուներին անուններն են՝ Մ. Օ. Արամեանց 15,000 ռ., Ա. Ա. Լաւրաբեան տուն և Եղբ. Աղաբեաններ 15,000 ռ., Ա. Ա. Լաւրաբեան տուն և Եղբ. Բուդաղեաններ 15,000 ռ., Ա. Ի. Աղաբեան 10,000 ռ., Խ. Գ. Թումանյան 10,000 ռ., Պ. Օ. Դուրախանյան 10,000 ռ., Կ. Ի. Միրզաբեգեան 10,000 ռ., Կ. Պ. Լաւրաբեան 10,000 ռ., Գ. Յ. Ալախանյան 10,000 ռ.: Պիտի ժողովին ընդամենը 300,000 ռուբլի և յոյս կայ, որ կը լրանայ այդ գումարը: Երէկ, պատարագի ժամանակ, սքազան խորհիւ Ստեփանէ մի ազգու բարոյ խօսեց, որին ներկայ էր մեծ բազմութիւն: Ահաւարակ եպիսկոպոսի գալուց յետոյ, համարեա թէ ամեն կիրակի եկեղեցում և բազում անգի զգեւու տեղ չէ լինում:

Ա. Բ.

ՆԱՄԱԿԱ ԽՄԲԱԳՈՒԹԻՒՆ

Գեկտեմբերի 1-ին Կարդալով «Մշակի» 137-րդ համարում հրատարակում է Երբ-Պրոֆանտում սովորող Յ. Ալախանյանի նամակը, որով նա օգնութիւն է լինող:

րում իր ուսումը աւարտելու համար, ընդ սմին ուղարկելով «Մշակի» խմբագրութեան պարոնի խնդրած միանուագ 100 ռուբլին, սրա հետ միասին յայտնում են նաև պատրաստակաւութիւնը չարունակաբար, երկու տարի, ուղարկել ամսական 15 ռ., ինչպէս խնդրում է պարոնը, իբրեւ նպաստ:

Եթէ ապագայում պ. Ալախանյան ցանկանայ վերադարձնել թող այդ գումարը «Մշակ լրագրի» միջոցով յանձնէ Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան անօրինութեանը:

Խոնարհաբար խնդրում են տղերքիս գրողի անունը չը յայտնել և թողնել ծածկված:

ՆՆՈՒԿԻՆ ԼՈՒԿՆԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Երէկ, գեկտեմբերի 6-ին, Նորին Կայսերական Մեծութեան Նիկոլայ Ալեքսանդրովիչի անուանակոչութեան օրը Թիֆլիսի բոլոր դատաստանութիւնների տաճարներում, նոյնպէս և հայոց վանքի մայր եկեղեցում գոհացողական մարթններ կատարվեցին: Քաղաքը վաղ առաւօտեանից դարդարված էր զրօշակներով, իսկ երեկոյան լուսավառված էր:

Երէկ, գեկտեմբերի 6-ին, ստացանք հետեւեալ հեռագիրը Պետերբուրգից, Ռուսաց գործակալութեան միջոցով. «Բարձրագոյն ուկազ. կովկասեան կառավարչապետ Երեմեյեւիչին հրամարված է լինել պետական խորհրդի անդամ, թողնելով գնեւաւաղիւստի կոչման մէջ»:

Մենք արդէն հաղորդեցինք, որ Սոփիօլում, մեր հայրենակից Նորայր Բիւզանդ մի ձառ խօսեց թիւրքաց հայերի մասին: Այդ ձառը նա արտասանեց Սոփիօլի գիտութիւնների Ակադեմիայի դահլիճում, 400 մարդկանց ներկայութեամբ: Այժմ մենք ստացանք այդ ձառը ամբողջապէս: Նա ազգու գոյնբով նկարագրում է այն դժուրը, որ կոչվում է թիւրքաց Հայաստան:

Անգլո-հայկական ընկերութիւնը, ինչպէս հաղորդում է «Daily News» լրագիրը, հրատարակեց տասնեակներորդ դարի նշանաւոր հայ հոգեւորական Ներսէս Ենորիշու կենսագրութիւնը, թարգմանելով այն ընդգրկեց, որ տպագրվել է ներկայ դարի սկզբում՝ վենեցիական: Թարգմանութիւնը նուիրված է Գաղափարներին:

Մեզ հաղորդում են, որ իդգիրի դատաւական բժիշկ պ. Չելեւադիսով առաջարկել է Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդին հիմնել իդգիրում մի ժամանակաւոր հիւանդանոց՝ հիւանդ գաղթականներին բժշկելու և խնամելու համար: Հիւանդանոցի ծախս հաշուած է գեկտեմբեր, յունվար, փետրվար և մարտ ամիսների համար 1200 ռուբլի: Ինքն բժիշկ Չելեւադիսով յանձն է առնում կառավարել հիւանդանոցը իր երկու ֆէլդշերներով: Բարեգործական ընկերութեան խորհուրդը, ինչպէս լսում ենք, ընդունել է այդ առաջարկութիւնը և կարգադրութիւններ է արել հիւանդանոցը բանալու համար:

Մեզ հեռագրում են Բագուից, գեկտեմբերի 5-ից. «Յօգուտ թեմական դպրոցի առ այժմ հաւաքված է 200,500 ռուբլի»:

Ինչպէս երևում է, հայ գաղթականների ծայրը հասել է մինչև Պետերբուրգ, և նոյն իսկ առել հեռու՝ Ֆինլանդիա: Նրանք, այդ խեղճ պանդոխտները բարի, կարեկից մարդիկ են որոնում աշխարհի բոլոր ծայրերում, և այդ յոյսով հասել են մինչև Պետերբուրգ, նոյն իսկ Ֆինլանդիա, որի մասին, խեղճ թիւրքացայ, երկու երեք տարի առաջ, ով գիտէ նոյն իսկ երազում չէր կարող երեակայել:

Կ. Պոլսի հայոց ինտելիգենցիայի մէջ տխուր հռչակ էլվայելող Բիւզանդ Գեկեան ուղում է մեղ հաւատացնել, որ կեղտոտ ջրերի հոսանքը արտադրել է... Այդ սլարդը, որ Բ. Դրան համաձայնութեան և թեկադրութեամբ հրատարակում է «Բիւզանդիոն» լրագիրը, սկսել է արտասուքներ թափել հաւածական հայերի վրա, յանուն մարդասիրութեան, յանուն... Սակայն դա մարդկային արտասուք չէ, այլ կոկորդիլոս... Այդպիսի արտասուքը գոլթ չէ չարժում, այլ միայն զղուանք...

Լրագիրները հաղորդում են, որ դատաստանական օրէնքները վերաքննող յանձնաժողովը, որ գործում է արդարադատութեան մինիստրի նախագահութեամբ, ձայների ահազին մեծամասնութեամբ որոշեց պահպանել իր ամբողջութեամբ երբեք ու եւ ալ դատաւորն էր ինստիտուտը:

Հինգշաբթի, նոյեմբերի 5-ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում Ս. Չաւարեան վերջացրեց յերանան և Կարսի նահանգի մասին իր զեկուցումը: Ժողովը վճեց զեկուցումը տպագրել և խորհրդի կարծիքը լսելուց յետոյ կայացնել վերջնական վճիռ զեկուցանողի արած առաջարկութիւնների մասին:

Թագաւոր Կայսրը հրամայել է, որ սովատանջ հնդկների համար Ռուսաստանում հաւաքված հացահատիկները ձրի ուղարկվեն Ռուսաստանի երկաթուղիներով մինչև Օդէսա, իսկ արտոնողից վճարաւոր նաւատորմի նաւերով Հնդկաստան:

ԲԱԳՈՒ քաղաքում գեկտեմբերի 4-ին վախճանվեց երրորդագրեց հասակում Յովհաննէս Գիւլ-նաղարեան: Հանդուցեալը, համալսարանն աւարտելուց յետոյ, նուիրվեց մանկավարժական ասպարէզին և ուսուցիչ էր նախ յերանի, ապա Գարաբաղի թեմական դպրոցներում: Նա մէկն էր մեր այն սակաւակիլ ինտելիգենտ անձինքներից, որոնք չը կարողացան տանել կառավարանութիւնները և առել լաւ համարեցին հեռանալ իրանց սիրած ասպարէզից, քան թէ հեթանոսական կղերի բնահոգեւորներին: «Մշակի» մէջ (1894 թ. № 47) տպված է նրա մի յղուածը յերանի թեմական դպրոցի դրութեան մասին: Թիֆլիսում եղած ժամանակ, նա ընտրվեց Հրատարակական ընկերութեան խմբագրական մասնաժողովի անդամ:

ԵԿԱՏԵՐԻՆՍՊՈԼԻՑ մեզ դրում են. «Թիւրքահայ գաղթականների ծայրը մեզ մօտ էլ հասաւ: Մի քանի ընտանիքներ, թաղանթած, կողոպտված և բողոքովին գուրկ հիւթական միջոցներից, թափառում են քաղաքում և պատահողից ողորմութիւն խնդրում: Բագրատ արեղայ վարդապետեան այստեղ եղած ժամանակ ցանկութիւն յայտնեց գործակալի և երէցիօսի աջակցութեամբ կազմել մի աղքատ ախանաւ հոգաբարձութիւն: Այսօր հայոց զալուցում ժողով կար, ուր և սկիզբ դրվեց արքայախոսներին օգնող հոգաբարձութեանը»:

ԳՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են, «Բագուի նահանգական դատարանի բաժինը կաւ այստեղ և նոյեմբերի 29-ին սկսեց գործերի քննութիւնը: Դատարանի բաժինը կը մնայ այստեղ երեք շաբաթ»:

ԵՆԻՍՏՐՆԻՑ մեզ գրում են. «Մի քանի տարի առաջ երանում բացվեց բուժարան (Лечебница): Այդ հիմնարկութեան տուած օգուտը ակներես է: Սրանից մի քանի տարի առաջ մահանտական տարրը խորհում էր մեր բժիշկներից, իսկ այսօր յաճախ կարելի է պատահել մահանտականներին, որոնք մոռացութեան տուած իրանց հոգեւորականների քաղաքած վեատակար մարքերը, տկար երեխային զրկած կամ տկար տանեցուն հետը վեր առած՝ տանում են բժիշկների մօտ բժշկելու և չեն զիմում աղա-հաբիմներին: Առելի հետաքրքրական և զարմուշակաւ այն է, որ լեւոնի քիւրդը անգամ և իր հիւանդին հետն ունենալով հարցնում է հանդիպած մարդուն բուժարանի տեղը և զիմում այնտեղ հաստատ հաւատալով նրա հասցրած օգնութեան: Բուժարանում այժմ կան երկու բժիշկներ, պարոններ Յովհաննէսեան և Ուրազով, որոնց անխնայ աշխատութիւնը և պատրաստակաւութիւնը հասարակութեան տէրն է դրաւել զէպի այդ հիմնարկութիւնը. բուժարան այցելուներից՝ ունեւորները վճարում են մօտքի համար 40 կօպէկ, իսկ չբաւորները ազատ են տուրքից»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵԿԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ Երկար տատանումներից յետոյ վերջապէս Ար-

դիւ-Համիդը բարեհաճեց իրաւունք տալ, որ շատ սահմանադրական օրինաց՝ պատրիարքական ընտրութիւն կատարվի—Երկու կուսակցութիւն գործում էր Կ. Պոլսի հայոց մէջ մէկը միւսին հակառակ. «Երկրորդեան» տեղապահ Բարթողիմէոսն էր անապատը Նորեան՝ ամեն միջոց գործ էին դնում համադիւ ճամար Բ. Գրան միմիտրոսին, որ չարիքի բուն աղբիւրը հայոց ազգային սահմանադրութիւնն էր, ուստի նախ քան պատրիարք ընտրելը պէտք էր սահմանադրութիւնը բարեփոխել, այսինքն գաւառներից բոլորովին խել շրանց ընտրողական իրաւունքը և ամեն իշխանութիւն ամփոփել պատրիարքի ձեռքում, որի գաւառների տակ խառն ժողովը հլու հրամանակատար միայն պիտի մնար։ Այս փոփոխութիւնը կատարելուց յետոյ Նորեանի խումբը որոշել էր Բարթողիմէոսի պատրիարքութիւնը աջողեցնել, որով Թիւրքիայի հայերն այնուհետև հոգում մարմն ու պիտի դառնային Երկրորդի «խոնարհ ստրուկը», այնպէս անուանում էր միշտ ինքն իրան Բարթողիմէոս Էֆենդի Չամիչը։

Այդ կուսակցութիւնն ընդդէմ՝ Տառնան Արթին փաշա, Նորատունկեան Գաբրիէլ, Ալէքսանդրեան եպիսկոպոսը, Ստեփան Ալլանեան, բայց մանաւանդ առաջինը, որի պաշտօնական բարձր դիրքը մեծ հեղինակութիւն էր տալիս նրան, աջողեցրին, որ նախ պատրիարքական ընտրութիւն կատարվի, սահմանադրութեան կատարեալ դրութեամբ, և ապա կարգադրվի թէ ինչ փոփոխութիւն պէտք է մտցնել սահմանադրութեան մէջ։

Հոկտեմբերի 28-ին Գում-Գաբուի պատրիարքարանի մեծ դահլիճում գումարվեց համագումար և եկեղեցական ժողով, տեղապահ Բարթողիմէոսի նախագահութեան և Ալէքսանդրեան Գրիգորիս եպիսկոպոսի առեւտարութեան տակ։ Ներկայ էին 62 եկեղեցական, այն է Կ. Պոլսում գտնվող բոլոր եպիսկոպոսները, բարադիւ վարդապետները, առաքելեց և աթոռակալ քահանաները։ Համագումար ժողովը ըստ կանոնի իր ընտրութիւններին ձեռնարկելու պատրաստեց նախ 42 եկեղեցականներից բաղկացած մի եռանուն ցանկ, որոնցից ազգային ընդհանուր ժողովը 14 անձ պիտի ընտրէր կրօնական ժողովի անդամութեան համար, և ապա մի որոշիչ ցուցակ էլ այն եպիսկոպոսների, որոնք աթոռի էին պատրիարքական պաշտօն վարելու։ Այս վերջին ցանկի գլխին փայլում էին նախկին տեղապահ Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոսի (47 ձայն), Բարթողիմէոս Չամիչեանի (37), Գրիգորիս եպիսկոպոս Զովհաննիսեանի (32), Վահրամ եպիսկոպոս Մանուկեան (32), անունները։ Համագումարի սուրբ հայրերը Օրմանեանին տուել էին միայն 13 ձայն (62-ից) — ճիշդ այնչափ, որչափ ստացել էր Լափրնէի նախկին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, նա որ ամենից առաջ լղջե իրան հարուածող ձեռքը, խղիւղեալի ջանքերին ընդդէմ—Սակայն ազգային ժողովի աշխարհական երեսփոխանները տարբեր հայեացք ունէին և համագումարի ցուցմունքն ապարդիւն անցաւ։ Այս գործն աւարտելուց յետոյ եկեղեցական ժողովը ցրվեց. նրան պիտի յաջորդէր աւելի բարձրը։

Որովհետ էր ազգային ժողովը գումարել առանց ուշացնելու, այն է երեք օր վերջը։ Համաձայն սահմանադրութեան՝ 130 երեսփոխաններ պէտք է ներկայ գտնվէին այդ ժողովին, բայց երբ պատրիարքարանում սկսեցին ներկայ երեսփոխանների ցանկը պատրաստել—հաղիւ 80 հոգի գտան. ժամանակը չէր նաև մտածել թէ այս 80 հոգին էլ ունէին արդեօք սահմանադրական իրաւունք, չէր լրացած արդեօք նրանց երեսփոխանական իրաւասութիւնը։ Բարթողիմէոս ամեն օր այցելում էր Տառնանին, որ թէ նրան և թէ իր խորհրդակցներին յանձնարարում էր որքան կարելի է շտապեցնել գործը։ Ռատի նոյն իսկ այն օրը, որ եկեղեցական համագումար ժողովը պիտի գումարվէր, ազգային ժողովի Կ. Պոլսում եղող երեսփոխանները հետեւալ պաշտօնական հրաւերն էին ստանում.

Տէր.

«Արդարութեան Գործոց Բարձր, Նախարարն իր ծանուցագրերով հաղորդած է մեզ Պատրիարքական նոր ընտրութիւնը արտօնող կայսերական Բարձր Խրատնէ և ըստ այնմ հրամայած է մեր ազգային Օրինաց համաձայն՝ գումարել եկեղեցական Համագումար ժողովին, և անոր միջոցաւ

պատրաստել առավ Պատրիարքական ընտրութեան ցուցակն՝ հրաւիրել Ազգային Ընդհանուր ժողովին Պէշիկթաշի Ս. Աստուածածնայ եկեղեցին, ընտրել տալ նախապէս կրօնական և քաղաքական ժողովներն և Համագումար ժողովը ցանկին վրա նորընտիր Բարադիւական ժողովը կողմէ պատրաստուելէ յետոյ Պատրիարքական ընտրելուց հնգանուն ցանկն՝ Ընդհանուր ժողովը հաղորդել այս կրկին ցանկին, կատարել Պատրիարքի ընտրութիւնն և անմիջապէս անօրինել նաև կարևորն օրինաց վերադրութեան մասին և հաղորդել Բ. Գրան։

Այս Բարձրագոյն հրամանաց կատարման համար Ընդհանուր ժողովն հրաւիրուած լինելով յառաջիկայ հինգշաբթի օր, 31 հոկտեմբեր, գումարվի ի նիստ Պէշիկթաշի Ս. Աստուածածնի եկեղեցւոյ մէջ, կը հրաւիրենք և զձեզ որ բաւականից նոյն օրն ժամը 4-ին անվերջ ներկայ գտնուի ժողովը նստին և կատարել օրինոք Ձեզ վերադրուած պարտականութիւնը։

28 Հոկտ. 1896

Կ. Պոլս

Յ. Գ. Նիսան տեղի պիտի ունենայ դռնիսկը կը խնդրուի որ Հաճելէ ձեռքի ունենալ ներկայ հրաւերակցին Ս. եկեղեցի մտնելու առիթ։

Այս հրաւերի մէջ թէպէտ ասված էր, որ նիստը կայանալու էր Բէշիկթաշի եկեղեցւոյ, որպէս զի հայաշատ Գում-Գաբուի մէջ գումարվելով, ցոյցի տեղի չը տայ, բայց վերջին վայրկեանին Տառնան Արթին փաշան կարելի համարեց, որ ազգային ժողովը, ըստ նախկին սովորութեան, պատրիարքական մայր եկեղեցւոյ գումարվի, միայն թէ նիստը գումարվի կատարվի և կողմնակի անձինք ներս չը թողնուին։ Այս նոր որոշման հիման վրա, հետեւալ լրացուցիչ հրաւիրագիրն էր ուղղուած երեսփոխաններին.

Տէր.

«Թէպէտ և Ընդհանուր ժողովը յառաջիկայ նիստը ըստ մեր հրաւիրագրի՝ զոր ուղղած էինք երկնի թուականաւ, տեղի պիտի ունենար Պէշիկթաշի Ս. եկեղեցւոյ մէջ, սակայն ի վերջէ պատշաճ դատուած լինելով նիստն գումարել Գում-Գաբուի Մայր եկեղեցւոյ մէջ, ըստ այնմ կը հրաւիրենք զձեզ որ հաճիք նոյն օրն որոշուած ժամուն ներկայ գտնուի ի Մայր եկեղեցւոյ։ (Կնիք)

29 Հոկտ. 1896

Մի և նոյն ժամանակ լրագիրների միջոցով էլ յայտարարվում էր նստի դռնիսկը լինելը, որ ոչ ոք չը փորձէր գալ և ներկայ լինել։

Հոկտեմբերի 31-ին, Մայր եկեղեցւոյ հաւաքվել էին ընդամենը 60 երեսփոխան—ընդհանուր գումարի և ոչ իսկ կէսը, որոնցից 10 հոգեւորական և 50 աշխարհական։ Կողմնակի ոչ մի մարդ չը կար, բացի Տառնան Արթին փաշայից, որ եկեղեցւոյ դռնում նստած հսկում էր ժողովի գործառնութեան վրա։ Արթին փաշայի կողքին նըստած էր իր որդին՝ Տիւրան բէյ, որ արտաքին գործերի մինիստրութեան մէջ հիւպատոսարանների տեսուչ է. սա էր, որ վերջերս Եւրոպա գնաց սուլթանի յանձնարարութեամբ և իր հօր կողմից խրատուելու համար յերաթիւստիան խումբերը, որ իրանց բռնի ցոյցերը գաղաղացներին Տիւրան բէյ հինգ օր առաջ էր միայն վերադարձել իր ճանապարհորդութենից, որի արդիւնքից զօժ էր մնացել Արթին փաշա։ Պատրիարքական թափուր աթոռի աջ կողմը փառաւոր կերպով բազմել էր Բարթողիմէոս Էֆենդին, որ հաւանականաբար սրտատրոյի և անհամբերութեամբ սպասում էր այն րօպլին, երբ ազգային ժողովը նրան կը հրաւիրէր այդ թափուր աթոռը գրաւելու... Բայց իր յոյսերն ի դերն եկան, չը նայելով, որ կառավարութիւնը մինչև վերջին վայրկեան իր ամբողջ ազդեցութիւնը չը խնայեց նրա ընտրութիւնը աջողեցնելու համար։

Նիստը բաց արեց տեղապահը՝ «Հայր մեր» և «Չգործն ձեռաց մերոց» աղօթքներով և կարգաց մի ընդարձակ տեղեկագիր, որի մէջ բացատրութիւններ էր տալիս—բայց մանաւանդ ճիշդ էր անում արգելադրելու իր տեղապահական գործունէութիւնը։ Սկսեան վտարձ էր իր ընտրութեան վրա, որ զոնէ ցոյցի համար էլ է չը հրաժարվեց պատրիարքական ընտրելի լինելուց, ինչպէս արել էր այդ՝ Հմայեակ եպիսկոպոսը իզմիրլեանի պատրիարքական ընտրութեան ժամանակ։ Տեղեկագիրն ընթերցումից և Բարթողիմէոսի յանձնարարութեամբ սուլթանին շնորհակալութիւն յայտնելուց յետոյ, ժողովը իր դիւանը

կազմեց, երեսփոխաններից ամենից ծերը՝ Ստեփան փաշա Ասլան և արեւ տեսնապետ ընտրվեց և ամենից երիտասարդը՝ Գուրգէն Յակոբ Էֆենդին՝ առեւտարդուր։ Այնուհետև կարգացվեց Մուրադեան Մեքիսեդէկ եպիսկոպոսի նամակը, որ հրաժարվում էր թէ կրօնական ժողովի անդամութեան և թէ պատրիարքական ընտրելի չէ։ Ներկայ Մուրադեանց կամ կարծում էր թէ ինքալ ևս ոչ մի պաշտօնի համար պէտքական չէ և կամ այնպէս էր համոզված թէ «Ազգային կաթողիկոսի» տիտղոսից յետոյ ուրիշ ոչ մի դիրք չարժար չէր գալ նրան։ Այս երկու պարագայի մէջ էլ սխալվում էր նա և ազգային ժողովը մերժեց նրա հրաժարականը։ Բարթողիմէոսից յետոյ՝ առեւտարական փաշան ևս պարտականութիւն համարեց ժողովից մի նոր շնորհակալութիւն ևս կորդել ի նպաստ սուլթանի, որ բարեհաճել էր թող տալ ժողովի գումարումը։

(Կը շարունակվի)

Բէշիկթաշի գործակալութիւնը թիւրքաց պաշտօնական արդիւնքներից տեղեկացել է, որ կարահիսարում գտնվել են շատ յղափոխական թղթեր, որոնք որոշ գաղափար են տալիս այնտեղի գաղտնի կազմակերպութիւնների մասին։ Գեղարփական ծրագիրը բաղկացած է 31 դրակոնական յօդուածներից։ Ամեն մի խումբ կազմվում է ամենաքիչը եօթն անդամից, որոնք երգվում են, որ յանձն են առնում տանջանքներ և նոյն իսկ մեծ ընկերութեան գործի համար։ Խումբը ունի իր պետը և առանձին պատգամաւորը։ Կենտրոնական խորհուրդը պարզում է ծագած թիւրիմացութիւնները։ 13-դ յօդուածի համաձայն՝ խումբը պէտք է պատմի ամեն մի անձի, որ կը յիշատի տեղական հայերին։ Խմբի մարդիկ պէտք է ջանան թիւրք պաշտօնեաներից իմանալ զանազան գաղտնիքներ և զրաւել պետական շտաբարանները։ Խումբը սեփականութեան ոչ մի իրաւունք չունի և բոլոր խումբը և գրաւածը պէտք է յանձնի կենտրոնական խորհուրդին։

Լճագոն են վերադարձել իրանց ճանապարհորդութիւններից պրօֆէսոր Ազար Բիլիթ և Յրէն-սիս Ստեփանեան։ Անգլո-հայկական ընկերութեան վերջին նիստում, որ տեղի ունեցաւ զեկտեմբերի 3-ին, պրօֆէսոր Բիլիթ պատմեց Ամերիկայում կատարած յանձնարարութիւնների մասին, իսկ Ստեփանեանը՝ Եւրոպայի հարաւ արեւելեան երկրների այցելութեան և այնտեղի գործունէութեան մասին։ Ընկերութեան քարտուղարը զեկտեմբեր թէ ինքն բանակցութիւններ է ունեցել Պարիզի մոսուլմանների հետ, որոնք պատկանում են երիտասարդ Թիւրքիայի կուսակցութեան։ Ընկերութեան այդ օրակց նիստի գործնական նպատակն էր ամեն տեսակ միջոցներով նպաստել, որ թիւրք կառավարութիւնը ազատութիւն տայ հայ բանասերներին, որոնք անմեղ տառապում են։ Այդ նպատակին շատ համակրում է և բայրօնեան ընկերութիւնը, որ առաջարկում է այդ գործի համար միանալ անգլո-հայկական ընկերութեան և ընդհանուր ջանքերով աշխատել զուլա բերելու ներման որոշումը։

Հուլիս «Secolo» լրագիրը հաղորդում է, որ Ֆրանսիան և Գերմանիան իրանց աջակցութեամբ կարողութիւն կը տան Ռուսաստանին կղզիացնելու անգլիացիներին։ Այժմ մեծ ջանքեր են գործ դրվում, որ Աւստրիան և միանայ այդ գործին և համաձայնութիւն կայացնի Ռուսաստանի հետ։ Արեւելքի վերաբերութեամբ Այդ համաձայնութեամբ Կ. Պոլսը պէտք է ընկնի Ռուսաստանի ձեռքը, իսկ Մակեդոնիան և Ալբանիան՝ Աւստրիայի ձեռքը։ Իսկ Իտալիայի սիրտը գրաւելու համար նրան ընծայում են Տիւրքիան։

«Daily News» լրագրի Հուլիս թղթակցից յայտնում է, որ իտալական կառավարութիւնը պահանջում է Բ. Կունից՝ վերադարձնել այն զէնքերը և ռազմամթերքը, որ Թիւրքիան գրաւել է իտալական մի նաւից, որ անցնում էր Անատոլիայի ծովափով։ Բ. Կունը ամբողջ կատարել այդ պահանջը, առաքելով, որ գրաւած իրերը նշանակված են եղել հայերի համար։

Վիեննայում հրատարակվող գերմանական «Das Vaterland» լրագրի 329 և 331 համարներում

տպված է մի ընդարձակ յօդուած Հայաստանի և հայերի մասին «Die christen verfolgung in Armenien» («Քրիստոնեաների հալածանքը Հայաստանում») վերնագրով։ Կա մի ճառախօսութիւն է, որ նոյեմբերի 24-ին պարլամենտի անդամ բարոն Դի-Պաուէլի կարգաց կաթողիկ երիտասարդների ժողովի հանդիսաւոր նիստում, և որի նպատակն է ծանօթացնել գերմանական հասարակութիւնը Հայաստանի, հայ ժողովրդի, նրա վիճակի և Փարս-Ասիայում վերջերս տեղի ունեցած գաղանկութիւնների պատմութեան հետ։ Առեւտարանը սկսում է իր ճառը նրանով, թէ գուցէ ոմանք հարցնեն, ինչի նա կաթողիկների ժողովում ճառախօսութեան այդպիսի թէմա է ընտրել։ «Առաջին, ասում է նա, այն պատճառով, որ ամեն մի կաթողիկ և քրիստոնեայ ժողով ամենապարմար տեղին է ներկայացնում՝ ընդհանուր քրիստոնէութեան դէպքերի մասին խօսելու, երկրորդ, որ քրիստոնեաների այդ հաւածանքի ընդհանուր բնաւորութիւնը այնպէս է, որ նա ուղղված է ամբողջ քրիստոնէական աշխարհի դէմ և, վերջապէս, են համոզված են, որ զուր, տիկնիւներ և պարոններ, լցված էք համակրութեամբ և ջերմ կարեկցութեամբ դէպի այն քրիստոնեայ եղբայրները, որոնք թէև ձեզանից շատ հեռու են, բայց շատ մօտ են Քրիստոսին»։

Ապա ճառախօսը համառօտ կերպով նկարագրեց, թէ ինչ տարածութիւն է բռնում Հայաստանը, որքան է հայ ժողովրդի թիւը ամբողջ երկրագնդի վրա (3—5 միլիոն), երբ է տարածվել քրիստոնէութիւնը Հայաստանում և աւելացնում է. «Հայերը ապրում են թիւրքերի, քիւրդերի և չեքեզների մէջ, հարիւրիւ 130/0 համեմատութեամբ, մի հանգամանք, որ լուսաբանում է մի կողմից հալածանքների ամբողջ պատմութիւնը, ծրագիրը և նպատակը, միւս կողմից օգնութիւն հասցնելու գծաւորութիւնը Հայաստանի քրիստոնեայ թագաւորութիւնը Լուսինեանների օրով կործանվեց խաչակիրների արշաւանքի վերջում, բայց իսկապէս միայն 1847 թ.ին, երբ Օսման փաշան բոլորովին նուաճեց քիւրդերին, հաստատվեց թիւրքերի տիրապետութիւնը Հայաստանում։ Այդ օրից սկսած թիւրքաց տիրապետութիւնը բաժանվում է երեք շրջանի. ամօթաւ լի վարչութիւնը 1847-ից մինչև 1891 թ.ին, կործանման քաղաքականութիւնը 1891-ից մինչև 1894 թ.ին, և ծրագրված կոտորածը 1894 թ.էից ի վեր»։

Ապա բարոն Դի-Պաուէլի երկար նկարագրեց այն բոլոր գաղանկութիւնները, որոնք կատարվել են վերջին տարիները, հայերի անեղանդի վիճակը, Կ. Պոլսի 1895 թ.ին և ներկայ տարվայ դէպքերը և յայտնելով, որ կոտորված հայերի թիւը, պաշտօնական տեղեկութիւնների հիման վրա, 85,000 է, իր ճառախօսութեան առաջին մասը վերջացնում է հետեւալ խօսքերով. «Հայկական տեսարանները աւելի դարձուրել են, քան պատմութեան ամբողջ արիւնաշաղկապ էջերը, նոյն իսկ Լէնկթէմուրը ստուերի մէջ է մնում, և ինչ որ նշանաւոր է, իբրև fin de siecle-ի մի նշան, այդ այն է, որ կոտորված կատարվում էր մի առանձին չարախոգացութեամբ»։

Գրանից յետոյ առեւտարանը մանրամասն կերպով նկարագրեց հայաբնակ վիլայէթների կրած աղէտները, հայերի կոտորածը, աքսորը, սովը, տառապանքը և այլն։ Իր ճառը բարձր վերջացնում է հետեւալ խօսքերով. «Ինձ թւում է, որ աւստրիական կաթողիկների պարտքն է նոյն պէս բարձրացնել իրանց ձայնը յայնպէս, ինչպէս Գերմանիայում, Անգլիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և այլ երկրներում, ուր զայրոյթի միտինգներ կազմակերպվեցին քրիստոնեաների հալածանքի դէմ»։

Օրիորդ Կիմբել, որ այժմ վերադարձել է Ամերիկա, տեղադրվում է ամերիկական կառավարութեան կողմից զրպարտութեան մէջ։ Իբր թէ օրիորդը իրան այցելուներին ասել է, թէ Թիւրքիայում միայն անգլիական դրօշակն է յարգված և ուրեմն ամերիկական դրօշակը անդոր է։ «Central News»-ի գործակալութիւնը հեռագրում է, որ միս Կիմբել հեքում է այդ մեղադրանքը։ Օրիորդը ասել է և ասում է, որ Փարս-Ասիայի խորքերում ամերիկական միսիօնարները միայն Անգլիայի հովանաւորութեան են դիմում, որովհետև Միացեալ-Նահանգները չունեն իրանց հիւպատոսները։ Միսիօնարները վերջին 20 տարվայ
